

2. Քէրէկը Խաչակրաց ժամանակ, բերդը եւ անոր Եկեղեցիին նկարագրութիւնը .

Քրիստոնէութիւնը շատ կանուխէն մուտք գտած էր Քէրէկի մէջ: Ե. դարուն Քարախ-Մուսա անուամբ եպիսկոպոսութիւն մը կար. իր եպիսկոպոսներէն երկուքը ծանօթ են, մին Դեմետրիոս՝ որ 536ի Երուսաղէմի ժողովին ներկայ գտնուած է, իսկ միւսը՝ Յովհաննէս աշակերտը Սաբայի վանական Ստեփանոսի: Մատապոյի մոզայիքէ քարտէսին Քէրէկի մասը անվնաս մնացած ըլլալով՝ Քէրէկը հոն կը տեսնուի ժայռի մը վրայ թառած, մեծամեծ շէնքերով, եկեղեցիներով և սիւնազարդ սրահներով: Խաչակիրք՝ երբ Քէրէկի տիրեցին, քաղաքը գրեթէ ամայի գտան և աւերակ. Երուսաղէմի Լատին թագաւոր Փոլէի սեղանապետ Բայէնն էր որ 1136ին, յաջողեցաւ ամրացնել անոր պարիսպները՝ աւելցնելով եկեղեցի և ուրիշ կարևոր շէնքեր, և Քէրէկը եղաւ Անդրյորդանանի գլխաւոր պողոտան: Քէրէկի և Մոնրէալի պարտնութիւնը իր դիրքովն ու տարածութեամբ Երուսաղէմի Լատին թագաւորութեան կարեւորագոյն պարտնութիւնն էր: 1177ին, Ռենօ Տը Շադիլլեոն՝ իր կնոջ մահուամբ՝ երկրորդ անգամ ամուսնացաւ « Գրագի տիկնոջ » Անդրյորդանանի պարտն Հոնֆրօս տը Տօրոնի այրւոյն էթիէնթ տը Միլլիի հետ, եւ Քէրէկի պարտնութիւնը ստանձնելով՝ քաջութեամբ հտ մղեց Սալահէտտինի 1183ի, և հետեւեալ տարիներու յարձակումները. բայց ան 1187ի պատերազմին՝ սպաննուեցաւ Սալահէտտինէ. եւ անոր այրին մէկ տարւոյ չափ պաշտպանեց Քէրէկը՝ որ սովին պատճառաւ միայն անձնատուր եղաւ: Խաչակրաց տիրապետութեան ժամանակ, Քէրէկի տմայութիւնը եկան շէնցներու զանազան գաղթականներ. այնպէս որ ծովային և ցամաքային վաճառականութիւնը մեծապէս ծաղկեցաւ. Մեռեալ Մովուն վրայ անընդհատ կ'երթեկէին վաճառարարձ նաւեր, ինչպէս երբեմն Յուստինիանոսի օրով. այնպէս որ երթեկող նաւերուն տուրքը մեծ եկամուտ մը եղած էր Քէրէկի պարտնութեան. այս վիճակը ալ աւելի զարգացաւ Ռենօ տը Շաթիլլեոնի պատերազմաշունչ և յանդուգն ձեռնարկներուն առթիւ: Քէրէկի պարտնները իրենց ընդարձակ սահմաններուն վրայ, դիւրութիւններ կու տային վաճառականաց, ինչպէս նաև առանձնաշնորհումներ՝ Երուսաղէմի